Լուսանկարը
չի պահպանվել

ԱՐԿԱԴԻ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ԽՍՀՄ նախարարների խորհրդին առընթեր
ՀԽՍՀ վիճակագրական վարչության պետ
(1940-1954թթ.)

Արկադի Գերասիմի Մինասյանը ծնվել է 1900թ.՝ Նախիջևան գավառի Պարագա գյուղում (Երևանի նահանգ), գյուղացու ընտանիքում:

1929-1932թթ. սովորել է Մոսկվայի ֆինանսատնտեսական և հաշվիչ գիտությունների ինստիտուտում և ստացել ֆինանսիստ-տնտեսագետ որակավորում:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1921թ. ք.Թիֆլիսում՝ սկզբում որպես Համամիութենական Լենինյան կոմունիստական երիտասարդական միության Կովկասյան բյուրոյի բաժնի ղեկավար, ապա տեղափոխվել Նախիջևանի ԻՍՀ և 1921-1923թթ. աշխատել վերոհիշյալ կուսակցության շրջանային կոմիտեում:

1924-1932թթ. աշխատել է Պետական բանկի հայկական գրասենյակի շրջանային տարբեր մասնաճյուղերում:

1932-1940թթ. աշխատել է Պետական բանկի հայկական կենտրոնական գրասենյակում, սկզբում որպես տեղակալ, ապա՝ կառավարիչ:

1940-1954թթ. ղեկավարել է ԽՍՀՄ նախարարների խորհրդին առընթեր ՀԽՍՀ վիճակագրական վարչությունը (1944թ. այն վերանվանվել է ԽՍՀՄ Պետպլանին կից վիճակագրական վարչություն):

1946թ.-ին Արկադի Մինասյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» և «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ցուցաբերած բարեխիղճ աշխատանքի համար» շքանշաններով:

Արկադի Մինասյանը վախճանվել է 1961 թվականին: